276 Խաչի վրա վերջին անգամ

1. Խաչի վրա վերջին անգամ
Ինձ համար էլ աղոթեցիր,
Գամված ափիդ անունս գրվեց,
Արյանդ շիթը մեղքերս մաքրեց:

Ինչպե՞ս ապրեմ ես առանց Քեզ,
Ռաբբի, Ռաբբի, Ռաբբի,
Ինչպե՞ս ապրեմ ես առանց Քեզ,
Այդ Քո սերն է, որ գտավ մեզ (2):

2. Ծնողներս ինձ ատեցին,
Անվանդ համար հալածեցին,
Ընկած էի ծեծված, լքված,
Ցավիս դրիր ձեռքերդ խոցված:

3. Հիմա մենակ, անօթևան
Քեզ եմ գալիս, ի՜մ Բարեկամ,
Ով ուզում է թող ինձ ատի,
Ես պիտ երգեմ՝ Հիսո՛ւս, արի՛:

4. Խաչի ճամփան ուր էլ տանի,
Միայն լինեմ Քեզ արժանի,
Հոգիս տալիս Ռաբբի կանչեմ,
Խոցված ձեռքիդ վրա հանգչեմ: